

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՀԱՄԱՌՈՒՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



անն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա ծնվել է 1867 թվին՝ գյուղական ընանիքում։ Նրա ծնողները բընակվում էին Լեռնային Ղարաբաղի Մարտագուղում։

Գրաճանաշություն սովորել է ակդրում զանազան գրագիտ անձանց մոտ, այսուհետև սովորել է Ղարաբաղի թեմական դպրոցում, իսկ 1881 թվին, իր մոր Հոգեղբոր՝ Անտոն վարժապետի միջնորդությամբ, ընդունվել է Գևորգյան Ճեմարանը։ Մանկության հասակից սկսած նա աշքի է ընկել իր շանասիրությամբ ու բացառիկ ընդունակություններով։ Ճեմարանում սովորելիս դասընկերն է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի։

Ճեմարանի դասընթացն ավարտելու տարում, 1889 թվին, սարկավագ է ձեռնադրվել։

Բարձրագույն կրթություն ստանալու համար 1892 թվին գործուղղվել է Գերմանիա, ուր շորս ու կես տարի ուսանելուց և լայրցիգի համալսարանում քննություն տալուց հետո ստացել է փիլիսոփայության դոկտորի տիտղոսը։

Գարեգին սարկավագ Հովսեփիանը Դերմանիայից էջմիածին վերադառնալով 1897 թվին աբեղա է ձեռնադրվում ու Գևորգյան Ճեմարանի ուսուցիչ նշանակվում։

1900 թվին նա նշանակվում է Թիֆլիսի թեմի առաջնորդական փոխանորդ։ Կարճ ժամանակամիջոցում, այստեղ, ժողովրդական լայն խավերում Գարեգին վարդապետն այնպիսի համակրանք է ձեռք բերում, որ թեմի հայ ազգաբնակչությունը մի համախոսական գործությամբ դիմում է Խրիմյան Հայոցին ու խնդրում եպիսկոպոս ձեռնադրել նրան և Թիֆլիսի թեմի առաջնորդ կարգել։ Մակայն Հայոցի կը վաղաժամ է համարում

եպիսկոպոսության աստիճանի շնորհումը երիտասարդ վարդապետին։

1901 թվին Գարեգին վարդապետը հրավիրում է Երևանի թեմական դպրոցի վերատեսուշ, որպիսի պաշտոնը նա վարում է մինչև 1905 թվվը։

1905 թվին նա նշանակվում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ։

1905—1907 թվականներին վարում է Շերարացան ամսագրի խմբագրի պաշտոնը։

Խրիմյան Հայոցի մահվանից հետո կարգվում է Ս. Հոփիսիմեի վանքի վանաւայր։

Իզմիրլյան կաթողիկոսի օրոք վարում է Խորհրդականի պաշտոնը։

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1914 թվին, նա նորից նշանակվում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ, որպի ի պաշտոնը վարում է մինչև ճեմարանի փակումը 1917 թվին։

Առաջին համաշխարհային պատերազմի ամբողջ տևողության ընթացքում, լինելով Եղբայրական Օգնության Հանձնախմբի անդամ և մի տարի էլ այդ Հանձնախմբի նախագահը, նա զանք չի խնայել հայ գաղթականության ծանր վիճակը թեթևացնելու համար։

1917 թվին, Գարեգին վարդապետը եպիսկոպում է ձեռնադրվում։

1924 թվին Գարեգին եպիսկոպոսն ընտըրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Միաբանական ժողովի նախագահ։

1927 թվին միաձայն ընտըրվում է Ղրիմի և Նոր-Նախիչևանի թեմի առաջնորդ։ Խորեն կաթողիկոսի օրոք բարձյալ ընտըրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Միաբանական ժողովի նախագահ։

1934 թվին, որպես կաթողիկոսական նվիրակ Սփյուռքի մեջ, Գարեգին եպիսկոպոսն այցելում է Ավրոպայի և Միջին ու Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր հայ գաղութները։ Այդ առաջելության ընթացքում նա Ս. Հջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության

Համար Հանգանակում է 40 հազար դոլար։
1936 թվին, նվիրակի Հանգամանքով այ-
ցելում է ամերիկահայ գաղութները։ Ազգա-
յին երեսփոխանական ժողովի կողմից 1938
թվին նա ընտրվում է Ամերիկայի թեմի ա-
ռաջնորդ։ այստեղ նա խոշոր աշխատանք
է ծավալում և կարճ ժամանակամիջոցում
կարողանում է կարգավորել ոչ միայն թեմի
գործերը, այլ և նոր լիցք հաղորդել տեղի
գաղութահայ կյանքին Հայրենական պա-
տերազմի տարիներին նրա գործուն մասնա-
կցությամբ է կազմակերպվում Հայկական
Հանձնախոսմքը, որն ի նպաստ Կարմիր Բա-
նակի ու պատերազմից տուժած հայրենա-

ու մասնակցում Ամենայն Հայոց Կաթողի-
կոսի ընտրությանն ու օծմանը։

Այսպիսով, 1897 թվին արեղա ձեռնադր-
վելով, նա հիմուն տարի անբասիր կերպով
ծառայել ու շարունակում է աճող եռանդով
ծառայել Հայ Եկեղեցուն, մեծ ծառայու-
թյուններ մատուցելով նրա վերելքի գործին։

Բացի բոլորանվեր հոգևորական լինելուց
Գարեգին Վեհափառ Կաթողիկոսը մեծ հայ-
րենասեր ու խոշոր գիտնական է։ Նա իր
բազմաթիվ ու բազմապիսի բովանդակու-
թյուն ունեցող աշխատություններով ձգտել
է ոչ միայն հայ հին հիշատակարանները



1945 թվի կարողիկոսական ընտրության ու օծման օրերին։ Ամենայն Հայոց Կարողիկոս
Տ. Տ. Գևորգ Զ. և Տաճճ Կիլիկիո Կարողիկոս Տ. Տ. Գարեգին Ա. դուռս են զայխ Մայր
Տաճարից

կիցների Հանգանակում է 120 հազար դոլար, իսկ «Սաստինցի Դավիթ» տանկային շարա-
սյան համար 85 հազար դոլար։

1943 թվին Կիլիկիան թեմերի Ազգային
Հնդկանուր Ժողովը Գարեգին արքապիսկո-
պոսին միաձայն ընտրում է Կաթողիկոս
Տաճճ Կիլիկիո։ 1945 թվի ապրիլի 8-ին տե-
ղի է տևենառում նրա կաթողիկոսական օծու-
մը։ Օժումից հազիվ երեք ամիս անց Գարե-
գին Կաթողիկոսը ժամանում է Ա. Էջմիածին

փրկել կորստից, այլ և նրանց միջոցով ար-
ծարծել, բորբոքել հայրենիքի սերը, խան-
դավառել ժողովրդի լայն զանգվածները հայ-
րենիքի սիրով, հպարտության զգացմունք
ներշնչել նրանց, հայ մշակույթի հոյակապ
կոթողների վրայից մոռացության փոշին
թոթափելով ու նոր փայլ հաղորդելով նը-
րանց։ Օժումած լինելով Հոետորական բնա-
տուր ձիրքով՝ նա ամեն ժամանակ ու ամե-
նուրեք իր հայունաշունչ ճառելու ժողովը

դական գանգվածները համակել է հայրենասիրական զգացումներով։ Այսօր էլ շերեն հայրենասեր Դարեգին Կաթողիկոսը ամենայն սրբությամբ կատարում է իր պարտականությունները հայրենիքի հանդեպ, իրեն ենթակա թեմերում գլխավորելով հայրենադարձության գործը։

Բազմաշխատ գիտնական Դարեգին Կաթողիկոսը հանդես է եկել թե որպես անգույնական գեղարվեստագետ ու մասնագետ հայ արվեստի ու մշակույթի պատմության և Հատկապես մանրանկարչության, թե որպես բանասեր ու մատենագիր և թե որպես պատմաբան ու հնագետ։ Դեռ ճեմարանում ուսանող եղած ժամանակ նա սկսում

թյուններ, ստվարածավալ աշխատովյուններ, որոնք մեծ մասամբ զետեղված են «Արարատ», «Հասկ» և այլ պարբերականներում, կամ լույս են տեսել առանձին դրբերով ու հատորներով, իսկ մի ստվար մասն էլ դեռ չի հրատարակված։ 1890 թվին «Արարատ» ամսագրում լույս տեսավ նրա «Ուսաւորիչ» և «Հայաստանեայց նկեղեցի» խորագիրը կրող առաջին հոգվածը, որին հետևեց նրա բազմաթիվ ու բազմապիսի բովանդակություն ունեցող հորվածների ու աշխատությունների շարքը։ Այսօր էլ ալեգարդ Կաթողիկոսը երիտասարդական ավյունով շարունակում է փոքր ծավալի ուսումնասիրություններ զետեղել «Հասկ»-ում,



1945 թվի Ազգային-Եկեղեցական ժողովի օրենքին։ Ամենայն Հայոց Կարողիկոս
Տ. Տ. Գևորգ Զ., Տաճան Արքիկի Կարողիկոս Տ. Տ. Գարեգին Ա. և Երուսաղեմի Պատրիարք
Տ. Տ. Կյուրեղ Բ Վեհարանի պարտեզում։

Է զբաղվել հայ բանահյուսության ուսումնասիրությամբ, ժողովրդական վեպի մասին ճեմարանի մոլացի ծառաների պատմաները գրի առնելով։ Վեց տասնյակ տարվա պատմություն ունի նրա գրական-գիտական գործունեությունը։ Վախուն տափալա ընթացքում նրա բեղմնավոր գրչի տակից դուրս են եկել կրոնա-եկեղեցական ու ազգային, պատմա-հնագիտական, մայտենագիտական-բանասիրական բազմաթիվ հոգվածներ, փոքր ծավալի ուսումնասիրու-

«էջմիածին»-ում ու մեկը մյուսի ետևից լույս ընծալել իր շահագանց շահեկան ստվարածավալ աշխատությունները։ Խնչպես տեսանք, ժողովրդական բանահյուսությունը վեճափառին դեռ հետաքրքրել է պատանեկության հասակից։ Նրա այս տիպի աշխատություններից հիշանակության արժանի են «Սասմայ ծոներ»-ը, «Փշրանքներ ծողովրդական բանահյուսութիւնից»-ը, «Ռոստու Զայ»-ը։

Նրա մատենագրական-բանասիրական ու-

սուսմասիրությունների շարքը սկսվում է «Խուրովիկ» բարգմանից և Երևանիրութիւնից նորին՝ աշխատությամբ, որին հետևում են «Միսիրար Սասեցի», «Միսիրար Այրիվանեցի», «Թովմա Մեծոփեցու կետեցը», «Ջազավանից ծողովը» գործերը և դեռ ցարդ անտիպ մնացած Ռուկերեանի, Կիւրեղ Աղեքսանդրացւոյ, Ռուգինեսի Հայերեն թարգմանությունները, Ստեփանոս Սյունեցիի «Չորից Աւտարանաց Մեկնութիւն»-ը և Գրիգոր Մազհատրոսի թղթերը:

Խոշոր արժեք են ներկայացնում Հայ արվեստին ու մշակութին և պատմության ու

մութեան մէջ» ուսումնասիրությունը, որը նվիրված է ԺԴ-ԺԷ դարերի հայոց պատմության մի շարք հարցերի լուսաբանմանը. այս աշխատության աղբյուրը ան ծառայել հարյուրավոր ձեռագրերում պահպանված հիշատակարանները, վանքերի, եկեղեցիների արձանագրությունները. Երրորդ հատորը պարունակում է 280 արձանագրություն և մոտ 100 ձեռագրերից քաղված հիշատակարաններ. Այս աշխատության պիտի հաջորդեն Որբելեանց և Վաշուտեանց պատմությունները, որոնց նյութերը մասամբ հավաքված ու մասամբ էլ պատրաստված են: Այս



ՐԱ-1004

1945 թվին հայրենիք ժամանելով Տ. Տ. Գարեգին Կարողիկոսը վերստին այցելում է իր սիրած հուշարձանները

Հնագիտության վերաբերող նրա ուսումնասիրությունները. այս շարքին են պատկանում նրա «Ենիքեր և ուսումնասիրութիւններ Հայ Արևեսի և Հայ Մշակոյթի Պատմութեան»-ը, որի երեք պրակները լույս են տեսել 1935-1944 թվականներին, իսկ շորորոդ և հինգերորդ պրակները ներկայումս պատրաստվում են բազմավաստակ գիտնականի կողմից, նաև երեք հատորով հրատարակված «Խոարքական կամ Պառշեանք Հայոց Պատ-

շարքին են պատկանում Ն. Մառի հիշատակին նվիրված «Հաւոց թաղի Ամենափրկիչը և նոյնանուն Յուշարձաններ», ինչպես նաև «Աղիքեկեանք և Երանց շինարարութիւնը», «Զ դարի հայ արուեստի լուսաբանութիւնը», «Մի կարեւոր ձեռագիր Նիւ-Եորքի Հանրային Մատենադարանում», «Արագածի գագարին ի խնդիր Լուսաւորչի Կանքեղին», նաև պատրաստ, բայց դեռ չդատարակված «Ձեռագրական Յիշատակարանների հաւաքա-

ծու»-ի երեք ստվար հատորները, որոնք հարուստ նյութ են պարունակում հայոց պատմության, մշակույթի, արվեստի ուսումնասիրության համար։ Այս հոյակապ գործի սպազրությունը կսկսվի մոտ ժամանակ-

Սակայն նրա աշխատությունների գլուխ գործոցն է կազմում «Հայ մանրանկարչութեան գունազարդ հարտէզը» որի վրա նա դեռ շարունակում է աշխատել:



Տանե Կիլիկիո Կարողիկոս S. S. Գարեգին
մաղրում առաջին կարավանով

Ա. Թեյրութի ճավահանգստում ողջերը է
մեկնող հայրենադարձներին.

Անտիպ Գործերից են նաև «Գրչութեան Արուեստը մին Հայոց մէջ», «Ժէ դատի հայ մանրանկարչութեան և որմանկարչութեան մասին» ուսումնասիրությունները և այլն։

Հուսանք, որ Գարեգին Կաթողիկոսի ցարդ անտիպ մնացած շափազանց արժեքավոր գործերը շուտով կհրատարակվեն ու մատչելի կդառնան բոլորի համար։

